Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

<<Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-121-30.08.2017-ՏՀ-011/0) վերաբերյալ

Առաջարկության փոփոխության (լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)
Աժ պատգամավոր Խոսրով Հարությունյան, Աժ պատգամավոր Միքայել Մելքումյան, ՀՀ կառավարություն	1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.	1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի	Ընդունվել է	Ընդունվել է

		Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմնին վճարվող գումարներ:»:		
Աժ պատգամավոր Խոսրով Հարությունյան, Աժ պատգամավոր Միքայել Մելքումյան	Նախագծի 2-րդ հոդված	2-րդ հոդվածը հանել	Ընդունվել է	Ընդունվել է
Աժ պատգամավոր Խոսրով Հարությունյան	Նախագծի 3-րդ հոդված	3-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019թ. հունվարի 1-ից:»:	Ընդունվել է	Ընդունվել է